

ՍՈՒՐՄԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-Սուբ-18/01

ք. Երևան

« 13 » « փետրվարի » 2018թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Հ.Հովհաննիսյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «**Հայաստանի բնության պետական թանգարան**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն **Գ.Ղազարյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «**Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ**» ծրագրի՝ բաժին 08, խումբ 02, դաս 02, ծրագիր 02 (Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոնդերի թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **40 274 000 (քառասուն միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ** գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:
 - 1.1.1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» 1937-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 2004 թվականի նոյեմբերի 24-ի «Թատրոններին, համերգային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, արգելոցներին, արգելոց-թանգարաններին պետական բյուջեի միջոցների հաշվին հատկացվող սուբսիդիայի հաշվարկման կարգերը հաստատելու մասին» 446-Ն հրամանը՝ պայմանագրով մեկ միավոր ցուցանմուշի ուսումնասիրման, հաշվառման և պահպանման միջին գինը (նվազագույն շահավետ գինը) սահմանվում է **6084.14 (վեց հազար ութսունչորս ամբողջ տասնչորս հարյուրերորդական) ՀՀ դրամ**:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N⁰¹-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**
 - 2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.



2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
- 2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:
- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակին՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն:
- 2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:
- 2.4.8. սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

3. Մոնիթորինգը

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Սույն պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Կազմակերպությանը տրված կանխավճարը մարվում է հանձման-ընդունման արձանագրության (Հավելված №3) հիման վրա և սույն պայմանագրի 4.3 կետով սահմանված կարգով:
- 4.3. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով:
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է սույն պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով:
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:



5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմինն և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2018 թվականի հունվարի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված №2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողությունները Կազմակերպությունը ուղղում է իր կանոնադրական գործառույթների իրականացմանը:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն պայմանագրի Հավելվածներ №№1-ը, 2-ը և 3-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«Հայաստանի Հանրապետության նախարարություն»

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Ստորագրություն»

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ

ք.Երևան, Տիգրան Մեծի 34

«Անելիք Բանկ» ՓԲԸ


«Ստորագրություն»

«Ստորագրություն»

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի



Հավելված № 1
 «Ն» « փետրվարի » 2018թ. կնքված
 № ՀՀ-ԲՆ-Սուբ-18/01 պայմանագրի



ԿԱՅՄԱԿԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
 մշակույթի նախարարության
 Վերականգնման կենտրոնի
 Վերականգնման կենտրոնի
 Վերականգնման կենտրոնի
 Վերականգնման կենտրոնի



ԿԱՅՄԱԿԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
 մշակույթի նախարարության
 Վերականգնման կենտրոնի
 Վերականգնման կենտրոնի
 Վերականգնման կենտրոնի
 Վերականգնման կենտրոնի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հրավանագվելիք միջոցառման		կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	համառոտ բովանդակությունը	անվանումը	պահանջվող գումարը (դրամ)
1	Հրատարակական միջոցառումների իրականացում • Բնագրերի փոխանակման թանկանշանակ բովանդակների մշակում և տպագրում	Բովանդակների մշակում, հրատարակում և տպագրում, հասարակության տարբեր խավերի իրազեկում և կապերի հաստատում թանկարժեքի տարածքում	Հայաստանի Հանրապետության տարածքում տեղեկատվության տարածում	Հրատարակական միջոցառումների իրականացում • Բնագրերի փոխանակման թանկանշանակ բովանդակների մշակում և տպագրում	150 000

2	Թանգարանային արժեքների համալրման, հաշվառման, պահպանման, ուսումնասիրման, արտահանման, վերականգնման միջոցառումների իրականացում	Ֆոնդային արժեքների հաշվառում, պահպանում, ուսումնասիրում, արտահանում, վերականգնում	<p>1. Հիմնական ֆոնդի համալրում նոր ցուցանիշներով (<< կներդրումային, բուսական աշխարհի ներկայացուցիչներ և օգտակար հանածոներ)</p> <p>2. Թանգարանային նմուշների լուսանկարահանում, անձնագրավորում, քարտագրավորում</p> <p>3. Ֆոնդային արժեքների պահպանում թանգարանի տարածքում</p> <p>4. Թանգարանի ֆոնդային ցուցանիշների պրոֆիլակտիկ ախտահանում (4 անգամ)</p> <p>5. Գույքի ցուցանիշների վերականգնողական միջոցառումների իրականացում</p> <p>6. Մշտական ցուցադրության համալրում հիմնական ֆոնդի ցուցանիշներով</p> <p>7. Ձեռք բերված օգտակար հանածոների ցուցանիշների նուրբացում, հաշվառում, անձնագրավորում, քարտագրավորում և լուսանկարահանում</p> <p>8. Թանգարանային ցուցանիշների անվտանգության պարզերաբար ճշտում համապատասխան մասնագետների հետ</p>	<p>1. Հիմնական ֆոնդի համալրում նոր ցուցանիշներով (<< կներդրումային, բուսական աշխարհի ներկայացուցիչներ և օգտակար հանածոներ)</p> <p>2. Թանգարանային նմուշների լուսանկարահանում, անձնագրավորում, քարտագրավորում</p> <p>3. Ֆոնդային արժեքների պահպանում թանգարանի տարածքում</p> <p>4. Թանգարանի ֆոնդային ցուցանիշների պրոֆիլակտիկ ախտահանում (4 անգամ)</p> <p>5. Գույքի ցուցանիշների վերականգնողական միջոցառումների իրականացում</p> <p>6. Մշտական ցուցադրության համալրում հիմնական ֆոնդի ցուցանիշներով</p> <p>7. Ձեռք բերված օգտակար հանածոների ցուցանիշների նուրբացում, հաշվառում, անձնագրավորում, քարտագրավորում և լուսանկարահանում</p> <p>8. Թանգարանային ցուցանիշների անվտանգության պարզերաբար ճշտում համապատասխան մասնագետների հետ</p>	16800 000
3	Գիտահավաքագրական միջոցառումների իրականացում	Ֆոնդերի համալրման և վերականգնման նպատակով նյութերի հավաքագրում, ուսումնասիրում	Ֆոնդերի համալրման համար գիտարշավ՝ 2 հատ գործուղում՝ 5 հատ	Հավաքագրված, ուսումնասիրված նյութեր, հաշվետվություններ	1400 000
4	Գրադարանի վաղում	Թանգարանի գրադարանի կանոնակարգում և վաղում	Գրքերի և անագրերի մշակում, վերականգնում, սպասարկում	Մշակված (11 միավոր) և վերականգնված (15 միավոր) գրադարանային գրքեր և անագրեր, ինչպես նաև 33 գրքի տղամանրկոմ	1200 000
5	Հանրահոջակման և հասարակայնության հետ կապերի բաժնի միջոցառումների իրականացում	Հասարակության տարբեր սոցիալական խավերի բնապահպանական, դաստիարակության, բնապահպանական կրթության, բնապահպանական քարտեզության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում	<ul style="list-style-type: none"> բնապահպանական միջոցառումներ՝ 5 հատ ժամանակավոր ցուցահանդեսների կազմակերպում՝ 10 հատ 	Իրագեցված բարձրացում կազմակերպված միջոցառումների և ցուցահանդեսների միջոցով	19524 000



<ul style="list-style-type: none"> • Այցելուների սպասարկում • Էքզիպորտիանների կազմակերպում • Ցուցադրության և մասսայական միջոցառումների իրականացում (հայերեն, ռուսերեն, անգլերեն [թղթաներով]) • Էկոտուրիզմի զարգացմանն աջակցում 	<p>Գիտական տեղեկատվության արդիականացում</p> <p>Էկոտուրիզմի շնորհիվ հասարակության տարբեր սոցիալական խավերի բնապահպանական դաստիարակության, բնապահպանական կրթության, բնապահպանական բարոգչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում</p> <p>Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում</p>	<p>Թանգարանի այցելուներին ցուցանմուշների ներկայացում և բացատրություն</p> <p>Տեղեկատվության տրամադրում, հարցերի պարզաբանում</p> <p>Ստույգ տեղեկատվության տրամադրում</p> <p>Նոր վահանակի ստեղծում</p> <p>Ֆոնդային արժեքների որակի պահպանում</p> <p>Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում (40 ձկնատեսակներ)</p> <p>Բնության նկատմամբ հոգատարության դաստիարակում</p> <p>Սնվածանքության ապահովում</p>	<p>Սպասարկված այցելուներ՝ 20000 կազմումներպած էքզիպորտիաններ՝ 500 ավելացված դիտակտիկ նյութեր՝ 10</p> <p>30.12.2018թ.</p> <p>Էկոտուրիզմի վերաբերյալ իրազեկության բարձրացում</p> <p>Իրազեկման բարձրացում</p> <p>Վահանակի միջոցով իրազեկության բարձրացում (1 հատ)</p> <p>Պահպանված ցուցանմուշներ 1799 ցուցանմուշ</p> <p>Հանրության գիտամանաչորության մակարդակի բարձրացում ձկնատեսակների վերաբերյալ</p> <p>Հանրության գիտամանաչորության մակարդակի բարձրացում ձկնատեսակների վերաբերյալ (7 պիտակ)</p> <p>Թանգարանի անվահան աշխատանք</p>	
<ul style="list-style-type: none"> • Այցելուների սպասարկում • Էքզիպորտիանների կազմակերպում • Ցուցադրության և մասսայական միջոցառումների իրականացում (հայերեն, ռուսերեն, անգլերեն [թղթաներով]) • Էկոտուրիզմի զարգացմանն աջակցում 	<p>Գիտական տեղեկատվության արդիականացում</p> <p>Էկոտուրիզմի շնորհիվ հասարակության տարբեր սոցիալական խավերի բնապահպանական դաստիարակության, բնապահպանական կրթության, բնապահպանական բարոգչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում</p> <p>Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում</p>	<p>Թանգարանի այցելուներին ցուցանմուշների ներկայացում և բացատրություն</p> <p>Տեղեկատվության տրամադրում, հարցերի պարզաբանում</p> <p>Ստույգ տեղեկատվության տրամադրում</p> <p>Նոր վահանակի ստեղծում</p> <p>Ֆոնդային արժեքների որակի պահպանում</p> <p>Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում (40 ձկնատեսակներ)</p> <p>Բնության նկատմամբ հոգատարության դաստիարակում</p> <p>Սնվածանքության ապահովում</p>	<p>Սպասարկված այցելուներ՝ 20000 կազմումներպած էքզիպորտիաններ՝ 500 ավելացված դիտակտիկ նյութեր՝ 10</p> <p>30.12.2018թ.</p> <p>Էկոտուրիզմի վերաբերյալ իրազեկության բարձրացում</p> <p>Իրազեկման բարձրացում</p> <p>Վահանակի միջոցով իրազեկության բարձրացում (1 հատ)</p> <p>Պահպանված ցուցանմուշներ 1799 ցուցանմուշ</p> <p>Հանրության գիտամանաչորության մակարդակի բարձրացում ձկնատեսակների վերաբերյալ</p> <p>Հանրության գիտամանաչորության մակարդակի բարձրացում ձկնատեսակների վերաբերյալ (7 պիտակ)</p> <p>Թանգարանի անվահան աշխատանք</p>	
<ul style="list-style-type: none"> • Այցելուների սպասարկում • Էքզիպորտիանների կազմակերպում • Ցուցադրության և մասսայական միջոցառումների իրականացում (հայերեն, ռուսերեն, անգլերեն [թղթաներով]) • Էկոտուրիզմի զարգացմանն աջակցում 	<p>Գիտական տեղեկատվության արդիականացում</p> <p>Էկոտուրիզմի շնորհիվ հասարակության տարբեր սոցիալական խավերի բնապահպանական դաստիարակության, բնապահպանական կրթության, բնապահպանական բարոգչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում</p> <p>Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում</p>	<p>Թանգարանի այցելուներին ցուցանմուշների ներկայացում և բացատրություն</p> <p>Տեղեկատվության տրամադրում, հարցերի պարզաբանում</p> <p>Ստույգ տեղեկատվության տրամադրում</p> <p>Նոր վահանակի ստեղծում</p> <p>Ֆոնդային արժեքների որակի պահպանում</p> <p>Հանրությանը ստույգ գիտական տվյալների մատուցում (40 ձկնատեսակներ)</p> <p>Բնության նկատմամբ հոգատարության դաստիարակում</p> <p>Սնվածանքության ապահովում</p>	<p>Սպասարկված այցելուներ՝ 20000 կազմումներպած էքզիպորտիաններ՝ 500 ավելացված դիտակտիկ նյութեր՝ 10</p> <p>30.12.2018թ.</p> <p>Էկոտուրիզմի վերաբերյալ իրազեկության բարձրացում</p> <p>Իրազեկման բարձրացում</p> <p>Վահանակի միջոցով իրազեկության բարձրացում (1 հատ)</p> <p>Պահպանված ցուցանմուշներ 1799 ցուցանմուշ</p> <p>Հանրության գիտամանաչորության մակարդակի բարձրացում ձկնատեսակների վերաբերյալ</p> <p>Հանրության գիտամանաչորության մակարդակի բարձրացում ձկնատեսակների վերաբերյալ (7 պիտակ)</p> <p>Թանգարանի անվահան աշխատանք</p>	



6	<p>Շիրակի մասնաճյուղ</p> <p>Լյճեյունների սպասարկում՝ 500 այցելու</p> <p>Միջոցառումների կազմակերպում՝</p> <ul style="list-style-type: none"> • Թոչնի օր • Կենդանիների պաշտպանության միջազգային օր <p>Ժամանակավոր ցուցահանդես</p> <ul style="list-style-type: none"> • Նկարում են մանուկները <p>Ցուցանմուշների պրոֆիլակտիկ ակտահանում (2 անգամ)</p>	<p>Շիրակի մարզում բնապահպանական դատարանություն, բնապահպանական կրթության, բնապահպանական քարոզչության և բնապահպանական մտածելակերպի ձևավորում</p> <p>Ֆոտոային արժեքների որակի պահպանում</p>	<p>Հայաստանի բնության վերաբերյալ գիտելիքների բազայի ավելացում</p> <p>Ցուցանմուշների պրոֆիլակտիկ ակտահանում</p>	<p>Սպասարկված 500 այցելու Կազմակերպված 15 Էքսկուրսիա</p> <p>Ախտահանված ցուցանմուշ՝ 209</p>	<p>30.12.2018թ.</p>	<p>1200 000</p> <p>40274 000</p>
---	---	--	--	--	---------------------	----------------------------------



Հավելված № 2
 «ՀՀ» « փետրվարի » 2018թ. կնքված
 № ՀՀ-ԲՆ-Սուբ-18/01 պայմանագրի



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի
 տնօրեն

(Signature)
 Կ.Տ.



Գ. Ղազարյան

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչ	Անվանումը Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ										Ֆինանսական ցուցանիշներ													
		I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ		9 ամիս	Տարի											
1046	Արտադրություն Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոտոների թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում	6612	6617	6622	6627	2000	12000	13000	20000	10	5	7	10												
Քանակական	Չափորոշիչներ Թանգարանային ցուցանիշների ուսումնասիրում, հաշվետուում և պահպանում (ցուցանիշների քանակը) Նպաստավոր այցելուների թիվը Ժամանակավոր բնապահպանական ցուցահանդեսների կազմակերպում (ցուցահանդեսների քանակը) Բնապահպանական միջոցառումների կազմակերպում, (միջոցառումների քանակը) Հրատարակական աշխատանքներ՝ բնապահպանական թեմայով բացիկների մշակում, տպագրում (օրինակ) Մշակված չէ																								
Որակական	Տարվա ընթացքում																								
Ժամկետայնություն	Մատուցվող ծառայության կրա կատարվող ծախսը (հազար դրամ)	X	X	X	X																				
Ծրագրի (ծրագրերի) ուղի (տունք)	2106ԱԱԱԱԱԱԱԱԱԱԱԱ Առաջնություն																								
1046	Թանգարանների ծրագիր																								
Վերջնական արդյունքի նկատագրություն																									
ՀՀ մշակութային ժառանգության բարելավումը մաս հանդիսացող թանգարանային հավաքածուների ակտիվացումն ու փոխանցումն սերտորեն կապված է թանգարանային հավաքածուների համալրման հարողակցության աճ՝ նպաստելով հանրապետությունում մշակութային գրոհաշրջանի զարգացմանը, տնտեսական զարգացմանը, հնչյուն նաև ազգնախնայական ծրագրերի իրագործմանը																									
Միջոցառումն իրականացնողի անվանումը																									
«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ																									

Հավելված № 3
 « 13 » « փետրվարի » 2018թ. կնքված
 № ՀՀ-ԲՆ-Սուր-18/01 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ բնապահպանության նախարարություն
 ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
 Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք
 ՀՀ 900011007995
 ՀՎՀՀ 02507198

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ
 ք.Երևան, Տիգրան Մեծի 34
 «Անեյիթ Բանկ» ՓԲԸ
 ՀՀ 11800064791700
 ՀՎՀՀ 02519651

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն №

Հ Ա Ն Ձ Ն Մ Ա Ն - Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն

« _____ » « _____ » 2018թ.

Պայմանագրի անվանումը՝ Սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագիր
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 13 » « 02 » 2018թ.

Պայմանագրի համարը՝ № ՀՀ-ԲՆ-Սուր 18/01

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար
 Հ.Հովհաննիսյանի, և Կազմակերպությունը՝ ի դեմս «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն
 Գ.Ղազարյանի, կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « _____ » « _____ » 2018թ.-ից « _____ » « _____ » 2018թ. ընկած
 ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	Քանակը	Նվազագույն շահավետ գինը մեկ միավորի հաշվարկով (դրամ)	Մեկ միավորի գինը (դրամ)	Մեկ միավորի համար տրամադրվող սուբսիդիայի չափը (դրամ)	Վճարման ենթակա գումարը (դրամ)	Վճարման վերջնաժամկետը՝ ամիս ամսաթիվ
1	2	3	4	5=3-4	6=2x5	7
Ընդամենը						

Ը Ն Դ ՈՒ Ն Ե Ց

Հ Ա Ն Ձ Ն Ե Ց

 (ստորագրություն)
 ազգանուն _____
 Կ. Տ. _____

 (ստորագրություն)
 ազգանուն _____
 Կ. Տ. _____